

**Կենսաբանություն, I ՓՈԻ-Լ
տևողությունը 60 րոպե
10-րդ դասարան**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Մամուռների կենսական ցիկլում գերակայում է.

- 1) սպորներով տուփիկը
- 2) սպորը
- 3) նախածիլը
- 4) գամետոֆիտը

2. Ջրիմուռները բազմանում են.

- 1) Վեգետատիվ եղանակով
- 2) Սպորների միջոցով
- 3) Սեռական եղանակով
- 4) Բոլոր պատասխանները ճիշտ են

3. Մոճու իզական կոնի յուրաքանչյուր թեփուկի վրա գտնվում է

- 1) Մեկ սերմնասկզբնակ
- 2) Երկու սերմնասկզբնակ
- 3) Երեք սերմնասկզբնակ
- 4) Չորս սերմնասկզբնակ

4. Ունի արդյոք ճպուռը մարնի խոռոչ.

- 1) Այո, ունի մարմնի առաջնային խոռոչ
- 2) Այո, ունի մարմնի երկրորդային խոռոչ
- 3) Այո, ունի մարմնի խառը խոռոչ
- 4) Ոչ, չունի

5. Ձկան արտաթորության օրգաններն են.

- 1) մետանեֆրիդիումները
- 2) մաշկային գեղձերը
- 3) իրանային երիկամները
- 4) կոնքային երիկամները

6. Տղայի արյան խումբը 0-է, նրա մոր արյան խումբը A-է, իսկ հոր արյան խումբը B-է: Հավանականությունը, որ տղայի քույրը կունենա նույն արյան խումբը,

- 1) 1/16 է
- 2) 1/8 է
- 3) 1/4 է
- 4) 1/2 է

7. Մեյոզ տեղի է ունենում .

- 1) Բակտերիաների սպորների առաջացման ընթացքում
- 2) Ուլտրիքսի գոոսպորների առաջացման ընթացքում
- 3) Ֆիտոֆտորի գոոսպորների առաջացման ընթացքում
- 4) Կլավավուշի սպորների առաջացման ընթացքում

8. Թիրախ բջջի կորիզային ռեցեպտորների (ընկալիչների), այլ ոչ թե թաղանթների հետ փոխազդող հորմոն է հանդիսանում.

- 1) ադրենալինը
- 2) ինսուլինը
- 3) աճի հորմոնը
- 4) տրիյոդոտիրոնինը

9. Արյան հոսքը հեծանվորդի ոտքերի մկաններում.

- 1) ավելի բարձր է, որպեսզի մկանները ապահովվեն թթվածնով
- 2) ավելի ցածր է՝ որպեսզի չայտուցվեն ոտքերը
- 3) չի տարբերվում արյան ցանկացած այլ հոսքից, քանի որ ոտքերի արյան հոսքը հաստատուն է
- 4) կախված չէ մկանային բեռնվածության բնույթից

10. Բույսերը պատասխանում են լույսի (սպեկտրային բաղադրության) ազդեցությանը՝ ակտիվացնելով

- 1) ցիտոքրոմը
- 2) ռոդոպսինը
- 3) ֆիտոքրոմը
- 4) ցիտոկլինինը

11. Հեմոգլոբինի մոլեկուլի կազմում հեմերի թիվը հավասար է.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

12. Օվկիանոսների մեծ խորությունների էկոհամակարգերում պարտադիր առկա են.

- 1) Կենդանիներ, միկրոօրգանիզմներ
- 2) Բույսեր, միկրոօրգանիզմներ
- 3) Բույսեր, կենդանիներ, միկրոօրգանիզմներ
- 4) Բույսեր, կենդանիներ

13. Մարդու օրգանիզմի գործունեության հորմոնալ կարգավորումը իրականացնում են.

- 1) նյարդային և արյունատար համակարգերը
- 2) արյունատար և շնչառական համակարգերը
- 3) նյարդային և էնդոկրին համակարգերը
- 4) նյարդային և շնչառական համակարգերը

14. Նմանատիպ մուտացիաներ ամենայն հավանականությամբ կունենան վարսակը և

- 1) արևածաղիկը
- 2) տարեկանի
- 3) կարտոֆիլը
- 4) ոլոռը

15. Ինչ է “պոպուլյացիայի գենետիկական կառուցվածքը”.

- բակտերիաների սպորների առաջացման ընթացքում
- 1) պոպուլյացիայի բոլոր առանձնյակների գենոտիպերի ամբողջությունը
 - 2) պոպուլյացիայի բոլոր առանձնյակների ֆենոտիպերի ամբողջությունը
 - 3) տարբեր գենոտիպերի և գեների ալելների հարաբերակցությունը պոպուլյացիայում
 - 4) տարբեր սեռերի առանձնյակների հարաբերակցությունը պոպուլյացիայում

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ոլոռի սերմերի դեղին գույնը դոմինանտ է կանաչ գույնի նկատմամբ : Հոմոզիգոտ դեղին սերմերով բույսը խաչասերել են հոմոզիգոտ կանաչ սերմերով բույսի հետ: Առաջին սերնդում ստացել են 158 սերմ, իսկ երկրորդում՝ 3256 սերմ: Քանի կանաչ սերմ կարող է լինել F2 սերնդում:

17. Քանի քրոմոսոմ կլինի մարդու՝ կամայականորեն վերցրած երկրորդ կարգի 100 սպերմատոցիտներում:

18. Օրգանիզմում ճեղքման է ենթարկվել 12 մոլ գլյուկոզ, որից 7 մոլը՝ թթվածնային փուլով: Քանի մոլ ԱԵՖ է կուտակվել թթվածնային փուլում:

19 Քանի քրոմատիդ է լինում քրոմոսոմում միտոզի ավարտին:

20. Եթե քրոմոսոմների մեկ զույգ ունեցող արուի 10 սպերմատոգոնները բեղմնավորեն նույնանման էգի 10 ձու, ապա քանի տիպի զիգոտ կառաջանա արդյունքում, եթե ընդունենք, որ մեյոզի ընթացքում էգի հոմոլոգ քրոմոսոմների տարբեր հատվածների փոխանակում տեղի է ունենում, իսկ արուի ոչ: